



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## ՔՍԼԻՖՈՐՄԻՈՅ ԽՈՐՃՐԴԱՐԱՆԻ ՀԻՆԳՃԱՐԹԻԻ ՆԻՍԽԻՆ

### **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ Եւ ՀԱՅ ԴԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒԹԻՉՆԵՐՈՒՆ**

Ինչպես նախընթաց տարիներու, այս տարի եւս, Զալիֆորնիոյ նահանգային խորհրդարանը Հինգշաբթի, 27 Ապրիլի իր նիստի օրակարգին վրայ ուներ հայկական ցեղասպանութեան ոգեկոչումը, որ կատարուեցաւ պատշաճ շուքով:

Այս տարի եւս, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի առաւտուն մեկնեցաւ Սաքրամենթո, ուր ներկայ եղաւ նահանգային խորհրդարանի նիստի բացման: Ներկայ եղաւ նաեւ Յայաստանի գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեան եւ Յայ Դատի Արեւմտեան Ամերիկայի Յանձնախումբի ներկայացուցիչները՝ Արմեն Կարապետեան, Այտա Տիմինեան եւ Ներկայացուցչական այլ դէմքեր:

Առաջնորդ Սրբազնը կատարեց նիստին բացման աղօթքը եւ ապրիլեան պատգամ մը ուղղեց օրենսդիր իշխանութեան անդամներուն:

Ծերակոյտին կողմէ այս առիթով հրատարակուած էր Ապրիլեան Եղեռնը հաստատող յիշատակագիր մը՝ Թուրքիոյ պետութեան կողմէ հայ ժողովուրդի հանդէա գործադրուած ցեղասպանութիւնը հաստատող վաւերագիր մը, որ հանդիսաւորապես յանձնուեցաւ Առաջնորդ Սրբազն հօր, հիւպատոսին եւ Յայ Դատի ներկայացուցիչներուն:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազնը մասնակցեցաւ նահանգային խորհրդարանի ընթացիկ նիստին, ընկերակցութեամբ հիւպատոսին եւ Յայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներուն, եւ այս առիթով, մեր մէկ ու կես միլիոն նահատակներուն հոգիներուն խաղաղութեան համար աղօթք կատարեց:

Առաջնորդ Սրբազնը նահանգային խորհուրդին յիշեցուց մարդուն դէմ Թուրքիոյ անմարդկային եւ անպատիծ մնացած արարքները եւ յոյս յայտնեց որ Եւրոպայի թէ քաղաքակիրթ այլ պետութիւններու նման, Միացեալ նահանգներ եւս պաշտօնապես ճանչնայ հայոց Ցեղասպանութիւնը եւ արդարութիւն պահանջէ Թուրքիոյ ներկայ կառավարութենեն:

Առ ի յարգանք մեր բիւրաւոր նահատակներուն՝ նահանգային խորուրդը եւս Ցեղասպանութեան մասին յուշատախտակ մը յանձնեց Առաջնորդ Սրբազն հօր:

Յուսադրիչ էր նահանգային խորհուրդի ժողովարակին մէջ տեսնել ներկայութիւնը Սան Ֆրանսիսքոյի Գոռլցեան-Չաքարեան-Վասպուրական Ազգ. Վարժարանի աշակերտներուն, ընկերակցութեամբ իրենց դասատուներուն:

Առաջնորդ Սրբազն հայրը, անոնց հետ միասին, պաշտօնական ներկայացուցիչներու հետ մտերմիկ գրոյց ունեցաւ:

Յայտնելով որ Նահանգապետ Առնոլտ Շուարցենեկը Ապրիլ 24-ի առիթով հռչակագիր մը հրատարակած էր Եւ Ապրիլ 23-ին 29-ը «Յայկական Ցեղասպանութեան յիշատակումի օրեր» հռչակած էր:

## **AT THE CALIFORNIA STATE ASSEMBLY**

### **PRELATE AND REPRESENTATIVES PRESENTED WITH PROCLAMATIONS AFFIRMING THE ARMENIAN GENOCIDE**

As it has done in previous years, this year too, the California State Assembly had on its agenda the issue of the Armenian Genocide at its Thursday, April 27 session.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Sacramento on Thursday to attend the opening of the State Assembly's session. Also present at the opening was the Honorable Gagik Giragossian, Consul General of the Republic of Armenia, and Armenian National Committee representatives Armen Carapetian, Aida Dimidjian, and others.

The Prelate conducted the opening prayer and delivered his message to Senate and Assembly members.

On this occasion, the Assembly has issued a proclamation affirming the Genocide of Armenians by the Turkish government, which they officially presented to the Prelate, the Consul General, and ANC representatives. Later on, during the general session, there was a moment of silence for the 1.5 million victims of the Genocide.

The Prelate reminded the Assembly of the injustices committed by the Turkish government, which to this day go unpunished, and expressed hope that following the example of European governments, the government of this great nation too will recognize the Genocide and demand justice.

During the session, it was touching to see the students of Krouzian-Zekarian-Vasbouragan Armenian School and their teachers, with whom the Prelate and representatives had an intimate discussion.

Let us remember that Governor Arnold Schwarzenegger proclaimed April 23-29 "Days of Remembrance" of the Armenian Genocide.